



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

2018թ. հոկտեմբերի 30-ին


N 118

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԲԱՇԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱԼԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 92 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների, առողջապահության և սոցիալական ապահովության, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության, կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների աշխատանքների համակարգումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Անահիտ Սարգսյանին:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների, քաղաքաշինության, զարգացման ծրագրերի և զբոսաշրջության, հողաշինության և հողօգտագործման ոլորտների աշխատանքների համակարգումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Գառնիկ Աթանեսյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում գյուղատնտեսության, բնապահպանության, աղբահանության և զորահավաքային նախապատրաստության ոլորտների աշխատանքների համակարգումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Արծվիկ Նիկողոսյանին:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2018 թվականի օգոստոսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալների աշխատանքներն ըստ ոլորտների բաշխելու մասին» N 92 որոշումը:

Недействительная подпись

X 

VERIFIED OCSP 10/30/2018 13:28:21 GMT

Подписано: GEVORGYAN DAVIT 32039

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

